ձանագիրս ։ Թէպէտ և յայտնի եղեն բանք երկուց կողմանց
սակս Ս․ Աստուածածնի , սակայն Հայք 'ի նախընթաց նըս-
տին ասացին թէ , 'ի ١٢٥٢ թուին 'ի կախել պատկերաց
և կանթեղաց յեկեղեցին Բեթղեհէմի , անդ էին և Յոյնք
և հաճութեամբ նոցա եղեւ , և 'ի գանկատանս Յունաց չե-
բեւի հաճութիւն նոցին , և գործն լեալ է առաջի երեւե-
լեաց քաղաքին , եւ 'ի նոցանէ ասա են Միւֆթի եւ Ալի
Միւհսին Էֆէնտիք , պատմեսցեն , որպէս տեսին եւ գի-
տեն ։ Միւֆթի Էֆէնտի , 'ի թուին ١٢٥١ Հայք բերին
հրովարտակ և ըստ զօրութեան նորին ընդ Դատաւորի քա-
ղաքիս գնացաք 'ի Բեթղեհէմ 'ի քննութիւն եկեղեցւոյն՝
զի նորոգեսցեն Հայք․ ընթերցաւ անդ հրովարտակն , եւ
'ի քննութեան պահու ծագեցաւ խռովութիւն 'ի մէջ եր-
կուց ազգաց․ Հայք մատուցին զհրովարտակն բաժանոր-
դութեան 'ի ժամանակս Նուրի Էֆէնտեայ , այն եւս ըն-
թերցաւ ։ Հայք յեցեալ 'ի զօրութիւն հրովարտակին այն-
միկ՝ խնդրեցին լինել կատարեալ բաժանորդ․ քննեցաւ
Այրն և Եկեղեցին․ և 'ի կախելն զպատկերս և զկանթեղս
թէպէտ անդ էին Հայք եւ Յոյնք , սակայն Փոխանորդն
Յունաց՝ ոմանց լռեաց և ոմանց հակառակեցաւ , և 'ի վեր-
ջոյ խռովեալ մեկնեցաւ անտի , և Դատաւորն կատարեաց
զմնացեալսն․ ոչ բաւականացան Հայք այնու , եւ Դատա-
ւորն աւելի իրաց ոչ ետ հրաման , և Հայք եւս ոչ հաճե-
լով թողեալ գնացին՝ եւ գործն մնաց 'ի վիճակի իւրում ։

Ալի Միւհսին․ Անդ էի եւ ես , այնպէս եղեւ որպէս
պատմեաց Միւֆթին ։

Քարտուղար դատարանի․ Այնպէս եղեւ որպէս ասա-
ցին , ոչ հաճեցան երկոքին կողմն , եւ Դատաւորն արար
Իլամ և առաքեաց առ Փոխարքայն Եգիպտոսի և խնդրեաց
առաքել 'ի Կոստանդինուպօլիս , այլ յաղագս ոչ ստանե-
լոյ հրամանի Արքային՝ յետս դարձաւ Իլամն ։

Հաֆըզ Բաշիտ Էֆէնտի․ 'ի թուին ١٢٤٩ հրամանա-
գիր Փոխարքային ուղղեալ առ Դատաւորն Երուսաղէմի՝
ըստ բողոքելոյ Հայոց․ յընթեռնուլն զայն 'ի դատարանի՝
հակառակութիւն լեալ է 'ի կողմանէ Յունաց , և Դատա-
ւորն քննեալ զվէճն՝ Իլամ արարեալ մատուցեալ է առ
Փոխարքայն , այլ պատահեալ 'ի ժամանակս պատերազմի՝